

Շարունակելով ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՑ  
հրատարակութիւնը, Հայկազեան Գոլէնի Հայագիտական Ամբիոնը  
առաւել գիտակցութեամբ կը շարունակէ իր առաջելութեան ճամ-  
բուն վրայ իրեն բաժին ինկած պարտաւորութեանց իրագործումը:

Մեծապէս երախտապարտ ենք մեր աշխատակիցներուն, ո-  
րոնց նուիրումն ու խանդավառութիւնը կը փառաբանեն մեզ անշեղ-  
բէն ծառայելու մեր առաջադրանքին: Շնորհակալութիւն նաեւ բո-  
լոր անոնց, որոնք մամուլով կամ անհատապէս գնահատեցին մեր  
նիգը, ստիպելով մեզ առաւել ուշադիր աշխատանքի:

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՑ այս համարով կ'ի-  
րականանայ մեր փափաքներէն մէկը: Հայրենի մտաւորականներու  
աշխատակցութեամբ հանգրուան մը եւս կ'արձանագրուի հայագի-  
տական մարզի մէջ ցարդ մեր ունեցած համագործակցութեան ճամ-  
բուն վրայ:

Մենք կը պահենք մեր խոստումը: ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻ-  
ՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻՑ էջերը բաց կը մնան բոլոր անոնց, որոնք գիտեն  
գիտական հիմքերու վրայ նետուած եւ առարկայօրէն ներկայաց-  
ւած խօսքին արժէքը: